ԽՃԱՆԿԱՐԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ ՀԱՅԵՐԻ ՄՈՏ ԵՎ ԴՎԻՆՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽՃԱՆԿԱՐ ՀԱՏԱԿԸ

1951 թ. ամռան Դվինի հնագիտական պեղումների ժամանակ Կաթողիկե եկեղեցու հատակից հայտնաբերվեց մի խճանկարի մնացորդ՝ 1,60 մ երկարությամբ, իսկ ամենալայն մասը՝ 0,65 սմ։

Խճանկարը հորինված է հինգ գույնի բնական քարերից՝ մուգ սրճագույն, կարմիր, կանաչ, գեղին և սպիտակ, որոնք շուրջ մեկ քառ. սմ մակերես ունեցող խորանարդիկների ձևով շարված ու ամրացված են կրաշաղախի շերտի վրա (տես նկ. 1, վերակազմությամբ)։

Ճիշտ է, որ մեր ճարտարապետական հուշարձաններում հազվադեպ է խճանկարային զարդարվեստը, սակայն դա չի նշանակում, թե մեր նախնիք անգիտակ են եղել այդ արվեստին, քանի որ մոզաիկայի հայրենիքը եղել է հենց Արևելքը։ Հին եգիպտացիները, պարսիկները,



Նկ. 1. Դվինի մայր տաճարի խճանկար հատակը (վերակազմություն Ա. Պատրիկի)

ուրարտացիները նրանով զարդարել են իրենց տաճարներն ու պալատները. հույները, վերցնելով այդ արվեստը Արևելքից, ճոխացրին ու կատարելագործեցին այն։ Նրանց մոտ մոզաիկան նախապես գործ էր ածվում միայն հատակներ զարդարելու համար, իսկ հռոմայեցիների մոտ շատ ավելի լայն կիրառում գտավ։ Հուլիոս Կեսարը նույնիսկ պատերազմական իր արշավանքների ժամանակ փոխադրել էր տալիս խճանկարազարդ շարժական մի հատակ, որի վրա սարքում էին նրա վրանը։ Օգոստոս կայսեր ժամանակ խճանկարով սկսեցին զարդարել նաև պատերը, ընդելուզելով գունավոր ապակիներ, նույնիսկ թանկագին քարեր՝ օնիքս, ագաթ, շափյուղա և այլն։ Դրանցից քիչ նմուշներ են մեզ հասել, բայց եղածն էլ վկայում է արվեստի այդ ճյուղը

բարձր զարգացման մասին։ Հիշատակության արժանի է, օրինակ, Պոմպեյում հայտնաբերված՝ Իսոսի ճակատամարտը պատկերող հոյակապ խճանկարը, ուր ներկայացված են 25 անձեր բնական մեծությամբ։

Բյուզանդական կայսրության ժամանակաշրջանում ևս խճանկարային արվեստը լայնորեն օգտագործվել է պալատների զարդարման, եկեղեցիներում սրբապատկերների հորինման համար։

Հայաստանում, ինչպես հայտնի է, Դաոնիի հնագիտական պեղումների ժամանակ, հայտնաբերվեց պալատական բաղնիսի հատակը զարդարող մի նրբարվեստ խճանկար, շինված գունավոր բնական քարերից։ Ըստ հնագետների, դա մեր թվականության III դարի գործ է։ Խճանկարում ներկայացված են դրվագներ հոմական դիցաբանությունից։ Խճանկարի թեման, ուրեմն, չի առնչվում մեզ ծանոթ հայկական դիցաբանության տվյալների հետ։ Սակայն, մոզաիկայի արվեստը, ըստ հնագետների, իրավամբ կարող է համարվել տեղում զարգացող հելլենիստական արվեստի լավագույն նմուշներից մեկը։

Ինչպես երևում է, Հայաստանում վաղուց հայտնի է եղել և կիրառվել է խճանկարային արվեստը։ Բացի վերջերս հայտնաբերված նմուշներից, ունենք նաև այդ մասին պատմական վկայություններ։ X դարի արաբ մատենագիր Ալ-Մուկադդասին, խոսելով Զվարթնոցի մասին, գրում է. «Դարիլից երեք փարսախ հեռավորության վրա գտնվում է սպիտակ քարերից շինված ութ սյուների վրա [նստած] գմբեթաձև գլխարկի նմանող մի եկեղեցի, որի մեջ գտնվում է Մարիամ կույսի նկարը։ Որ դռնից էլ [ներս] մտնես եկեղեցի, դու կտեսնես Մարիամ կույսի պատկերը»[1]։

Արդարև, Զվարթնոցից հայտնաբերվել են խճանկարի բեկորներ, որոնք դժբախտաբար այնքան չնչին նմուշներ են, որ չեն կարող պատկերացում տալ անցյալի խճանկարի գեղեցկության մասին։

1967 թ. Դվինում կատարված փորձնական մի պեղումի ժամանակ, Խաչիկ վրդ. Հովյանցը հայտնաբերել էր Կաթողիկե եկեղեցու արսիդի վրա VII դարում շինված Տիրամոր մի խճանկարը, հավանաբար Ալ-Մուկադդասիի ակնարկածի նմանը, որը, սակայն, մի ժամանակ տեղում անպաշտպան թողնված լինելով, փշացել, անհետացել է։

VII դարում սովորություն է եղել Հայաստանի գլխավոր եկեղեցիների արևելյան արսիդը Տիրամոր խճանկար պատկերով զարդարելը, պարզ է, մանուկ Հիսուսն էլ գրկին։ Զվարթնոցի խճանկարի բեկորները, որոնք գտնվել են տաճարի արևելյան արսիդի մնացորդների վրա, ապացույց են այն բանի, որ X դարի արաբ մատենագիր Ալ-Մուկադդասու գրածը Զվարթնոցի վերաբերյալ միանգամայն ճիշտ է[2]։

Ըստ պրոֆ. Կ. Հաֆադարյանի, V և VII դարերի խճանկարները միմյանցից խիստ տարբերվում են։ Այսպես, V դ. մինչև այժմ հայտնի հուշարձաններն ունեն միայն երկրաչափական ձևեր, իսկ VII դարինը՝ կոմպոզիցիոն նկար[3]։

Եթե հարցը վերաբերում է միայն եկեղեցու արսիդի վրա զետեղված սրբապատկերներին, այդ տեսակետը ճիշտ է։ Ինչ վերաբերում է զարդական բնույթ ունեցող խճանկարներին, ապա դրանք պետք է հետևած լինեն մեր վաղեմի երկրաչափական և մանվածո ոճին, որը կիրառվել է թե՛ մեր ճարտարապետական հուշարձաններում, թե՛ խաչքարերի, թե՛ եկեղեցու քանդակազարդ փայտե դռների վրա և թե՛ մեր մանրանկարչության մեջ՝ ինչ-ինչ զարդերի հորինման համար։ Ուստի, զարդական խճանկարի զարգացման պատմական ընթացքը չէր կարող շեղվել այդ ընդհանուր ոճից, մի ոճ, որ ըստ Թ. Թորամանյանի, «Եվրոպական գիտության մեջ առանց վերապահումների արձանագրված է իբրև բացարձակ հայկական ոճ»[4]։

Վերոհիշյալ մեր տեսակետի մի ապացույց է նաև Անիի Գագկաշեն Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու (կառուցված XI դարում Զվարթնոցի ոճով) հյուսիս-արևմտյան դռան վերև հայտնաբերված վեցթևյան աստղաձևով հորինված խճանկարը[5]։

---

[1] Ал. Мукаддаси, Ахсану-т-текасим фи марифату-л- акалим. „Сборник материалов для описания местностей и племен Кавказа". Выпуск XXXVIII, Тбилиси, 1908.

[2] Տե՛ս Կ. Հաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 98։

[3] Նույն տեղում։

[4] Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, հատ. Ա, էջ 93։

[5] Տե՛ս Նույն տեղում, հատ. Բ, էջ 259։

Երուսաղեմում 1894 թ. հայտնաբերված հայկական նշանավոր խաչանկարը, հորինված 7,15×4,40 մ ընդարձակ տարածությամբ հատակի վրա, ներկայացնում է զարդական ինքնատիպ նկարագիր։ Մանվածո մի հյուսք եզերում է հատակը, ուր կանթավոր շքեղ սափորից սկիզբ է առնում մի որթատունկ, երկու կողմ տարածելով իր շիվերը, որոնք հաջորդաբար իննական գույգ շրջանակներ կազմած, բարձրանում են մինչև վեր, յուրաքանչյուրում՝ խաղողի զույգ ողկույզ առկախ, կենտրոնում՝ մի թռչուն։ Շրջանակների թիվը, կենտրոնականներն էլ հաշվելով, 43 է, իսկ թռչունների տեսակը՝ 22։ Հատակի վերևի ճակատային մասում զետեղված է հայերեն հետևյալ երկտող արձանագրությունը. ՎԱՄՆ ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՁՈՐՈՑ ՁԱՆՈՒԱՆՍ ՏՐ. ԳԻՏԷ

Այս արձանագրությունից վերև դրված է (ըստ մեզ՝ բոլորովին անհարկի կերպով) քառանկյունի մի հավելված ևս, գրեթե նույնպիսի զարդական մոտիվով՝ կենտրոնում լիքը մի մրգաման, իսկ չորս անկյուններում՝ մեկական թռչուն։

Արձանագրության, հետևաբար նաև խաչանկարի հորինման ժամանակը ճշտելու համար բանասերները նկատի են առել մեսրոպյան տառատեսակը։ Ըստ Բարեգին կաթողիկոս Հովսեփյանի, այն պատկանում է VI—VII դարերին։ Ըստ ըստ. Հ. Տաշյանի՝ V կամ VI դարերին[6]։

Հայերը, հատկապես իշխանական դասից, IV դարից սկսած, այցելել են Երուսաղեմի և շրջակայքի սրբավայրերը՝ որպես ուխտավորներ, հիմնել են այնտեղ վանքեր, որոնց թիվը, ըստ Անաստաս վարդապետի (գրել է VII կամ VIII դարերում), հասնում էր 70-ի։

Հիանալի նրբությամբ և գունագեղությամբ հորինված հիշյալ խաչանկար հատակի գոյության փաստից կարելի է հետևցնել, որ բուն Հայաստանում էլ որոշ չափով ծաղկած է եղել այդ արվեստը։ Բացի այդ, խաչանկարի զարդական արվեստը սերտ նմանություն ունի հայկական մանրանկարչական մոտիվների հետ։

Թե որքան մանրակրկիտ և համբերատար աշխատասիրի արդյունք է եղել այդ հատակը, կարելի է գաղափար կազմել մոզաիկների թվից (երկայնքում՝ 527, լայնքում՝ 393, ընդամենը 207, 111 հատիկներ) և գույներից (կարմիր, սև, նարնջագույն, կապույտ, դեղին և մոխրագույն)։

Խաչանկարային այս բարձրարվեստ հուշարձանից բացի, Երուսաղեմում հայտնաբերվել են նաև հայկական չորս մոզաիկներ ևս, հայերեն արձանագրությամբ, որոնց տառաձևերը և արվեստի ոճը, ըստ Մեսրոպ եպ. Նշանյանի, նման են իրար. միայն վերջինների նկարները զանազանվում են իրենց պեսպեսությամբ[7]։

Անկասկած, Երուսաղեմի վերոհիշյալ խաչանկարներից ավելի վաղ շրջանի են 1955—1959 թթ. Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգության ընթացքում ձեռնարկված պեղումների ժամանակ հայտնաբերված բազմաթիվ խաչանկարային բեկորները, որոնք գտնվել են տաճարի V դարի կառուցվածքի հիմքերի հորիզոնի վրա։ Մոզաիկ հատիկների այդ կույտը բաղկացած է շուրջ տասի չափ զանազան գույնի բնական քարերից, որոնց մեջ խառն են նաև գունավոր կիտվածով պատրաստված բազմաթիվ հատիկներ։ Դա ցույց է տալիս, որ Մայր տաճարի ոչ միայն հնագույն հատակի, այլ նաև պատերի վրա եղել են խաչանկար հորինվածքներ, քանի որ կիտվածավոր հատիկը հատակի համար դիմացկուն չլինելով, գործածական է եղել միայն պատերի վրա։

Իժրախտաբար, հայտնաբերված նմուշների մեջ չկա ոչ մի զարդական բեկոր, որ մեզ գեթ նվազագույն մի գաղափար տար այդ արվեստի մասին։

Վերին աստիճանի հետաքրքրական է նաև այն իրողությունը, որ տաճարի արևելյան աբսիդի կենտրոնում, թաղված վիճակում, բացվել են IV—V դարերի որմանկարչության մնացորդներ՝ ավերված վիճակում։ Ինչպես որմանկարի, այնպես էլ խաչանկարի մնացորդները պատկանել են Մայր տաճարի սկզբնական կառուցվածքին[8]։

Կարելի է, ուրեմն, ավելի համարձակ ենթադրությամբ ընդունել, որ այդ որմանկարները և խաչանկարները պատկանելիս են եղել եթե ոչ հեթանոսական մի մեհյանի, քանի որ արևելյան աբսիդի սկզբնական հատակում հայտնաբերվել է հեթանոսական շրջանի կրակարան՝ մոխրոտ լի, որի վրա էլ հիմնվել է մայր խորանի նվիրագործված վեմը, այլ՝ հենց Էջմիածնի տաճարի սկզբնական կառուցման ժամանակին՝ IV դարին։

---

6 Թ ե ո դ ի կ, Ամենուն Տարեցույցը, 1927, էջ 399—406։

7 Նույն տեղում։

8 Ա լ. Մ ա հ ի ն յ ա ն, Մայր տաճարի ճարտարապետական կերպարը, «Էջմիածին», 1961, № Ա, էջ 63։

Այդ ամենը ապացուցում է, որ խաչանկարային արվեստը պատմական իր արմատներ է ունեցել Հայաստանում։

1951 թ. Դվինում հայտնաբերված խաչանկարը, որը բավականին լավ պահպանված է, ըստ պեղումների ղեկավար պրոֆ. Կ. Ղաֆադարյանի, պատկանում է V դարին։ Նա իր կարծիքը հիմնավորում է պատմական հետևյալ իրողություններով։ 450 թ. հին մեհյանի շենքում վերահաստատվել է Կաթողիկե եկեղեցին, իսկ 485 թ., երբ Վահան Մամիկոնյանը մարզպան է նշանակվում, վերանորոգության է ենթարկում ավերված բազիլիկ եկեղեցին։ Մոզաիկ հատակի շինություններ տեղի է ունեցել, ուրեմն, այդ թվականների միջև, քանի որ հետագայում հատակը սալարկելու համար ծածկել են կրաշաղախի հաստ շերտով։ Այդ նոր հատակը պատրաստվել է հավանաբար 618 թ., Սմբատ Բագրատունու վերանորոգության ժամանակ, երբ բազիլիկ նոաթև և հարթածածկ եկեղեցին վեր է ածվել խաչաձև հատակով գմբեթավոր տաճարի[9]։



Նկ. 2. Կաթողիկե եկեղեցու հատակագիծը։ Կետանշված ձևը ներկայացնում է 618 թ. Սմբատ Բագրատունու վերակառուցածը։ Սլաքով ցույց է տրված խաչանկարի տեղը

Արդարև, երբ դիտում ենք կաթողիկե եկեղեցու հին հատակաձևը (նկ. 2) և 618 թ. Սմբատ Բագրատունու վերակառուցածը (կետադրված), շատ համոզիչ կերպով երևում է խաչանկարի V դարի պատկանած լինելը, քանի որ վերակառուցման գմբեթակիր չորս մույթերից մեկը մասամբ գալիս-ծածկում է այն։

Հետաքրքիր է, մանավանդ, խաչանկարի զարդական հորինվածքը։ Վերևում կա մի լայն ժապավեն, որը եզերում է տակի երկրաչափական բազմանկյուններից կազմված ընդարձակ դաշտը։ Մենք կարծում ենք, որ ժապավենի այն սյուս կողմում էլ կրկնվում է նույն դաշտը, ինչպես ցույց է տալիս մի փոքր բեկոր, և այդպես հաջորդաբար։

Ժապավենի զարդական հորինվածքում տեսնում ենք իրար հատող կիսաշրջանակներ, որոնց յուրաքանչյուրի մեջ դեմ-դիմաց կան նշաձև մեկական հյուսք։ Մեր կարծիքով դա զարդական աննպատակ մի ձև չի եղել, ինչպես կարծում են ոմանք, այլ ներկայացնում է արմենակավոր թևերով այն խաչաձևը, որն արևելյան հին ժողովուրդների (նաև հայերի) մոտ այնքան տարածված մի խորհրդանիշ է եղել իբրև բարենշան։ Դրանում համոզվելու համար մենք փորձել ենք (նկ. 3Ա) այդ նույն տեղում դնել մոտավոր նմանությամբ չորս տեսակ զարդաձևեր՝ № 1, 2, 3, 4, որոնցից որևէ մեկը կարող էր լիովին և վայելչորեն փոխարինել վերոհիշյալ արմենակավոր խաչանիշը։ Սակայն տաղանդավոր զարդանկարիչը հաջողել է զարդական այդ ձևի մեջ դնել նաև բովանդակություն, մի բան, որ հայ զարդանկարիչների մոտ ավանդական այնքան ընդհանուր է եղել։

Ցույց տալու համար, որ նույն այդ զարդական խորհրդանիշը դարերի ընթացքում շարունակել է գործածվել մեզ մոտ, տալիս ենք XI դարում կառուցված Անիի Գագկաշեն եկեղեցու մի որմաքանդակ (նկ. 3Բ), ուր տեսնում ենք ճիշտ նույն խորհրդանիշը, կանոնավոր հաջորդականությամբ, մեջընդմեջ ընդլայնված յոթփերթանի մի ծաղկով, վեցթևանի մի աստղով և հետո մի մարգարտածաղկով, և այդպես շարունակաբար։

Խաչանկարի՝ մեր կատարած վերակազմության ընթացքում օգտվել ենք ավերումից բացերախտարար զերծ մնացած այն անհրաժեշտ տվյալներից, որոնց հիման վրա կարելի եղավ

9 Կ. Ղաֆադարյան, Դվինի կաթողիկե եկեղեցին, ԴԱ «Տեղեկագիր», № 9, էջ 71—83։



Նկ. 3. Անիի Գաղկաշեն բոլորակ եկեղեցու բանդակներից

ստանալ խճանկարի ամրողջական և հարազատ պատկերը։ Թե՛ գոտու և թե՛ ֆոնի երկրաչափական ձևերի զարդական հյուսքը հորինված է մասնագիտական հմտությամբ և բարձր ճաշակով։ Դա ցույց է տալիս, որ X—XIV դարերի ընթացքում մեր ճարտարապետական և խաչքարային հուշարձանների վրա ծաղկող այնքան ինքնատիպ և բարձրարժեք արվեստն ունեցել է իր դարավոր, ավանդական խոր արմատները։

Ա. ՊԱՏՐԻԿ

ԱՐՏԱՎԱԶԴ II-Ի ԶՈՐԵՔԴՐԱՄՅԱՆԸ

1959 թ. ապրիլի 27-ին, Հայկական ՍՍՌ Էջմիածնի շրջանի Փարաքար գյուղի մոտ, աշխարհագրության ինստիտուտի փորձադաշտից մի փոքր արևմուտք, հնամյա շինության փլատակների մեջ գտնվեց Հայոց թագավոր Արտավազդ II-ի (36—34) մի արծաթե դրամ։ Շուրջ 2000 տարվա վաղեմություն ունեցող փոքրիկ այս վկայությունը բարեբախտաբար շատ լավ է պահպանվել և նրա վրա դրվագված պատկերները, գրությունները, զարդանշանները ու խորհրդանշանները դիտվում են հատակությամբ։ Այն ներկայումս պահվում է Հայկական ՍՍՌ պետական պատմական թանգարանում։ Դրամի վրա մենք տեսնում ենք հետևյալը.

Ա կողմում պատկերված է երիտասարդ Արտավազդը՝ մինչև ուսերը, գեղի աջ նայող ածիլված կիսադեմքով, գլխին՝ հայկական թագը, թեքեակի կոնաձև, վերևում ավարտված հինգ ժանիքաձև հառագայթներով։ Թագի կենտրոնական մասը զարդարված է ութ թեքանի աստղով, վերցրված մարգարտաշար քառանկյուն շրջանակի մեջ, որի ձախ և աջ կողմերում կա մեկական բուսական զարդանշան։ Ականջակալները վերև են բարձրացված ու շրջված են իրար վրա հակառակ կողմերից՝ ամրացված ճակատային հատվածում։ Արքայի մի քունքից մյուսն անցնում է վարսակալ-ժապավեն, որի ծայրերը հանգուցված են ծոծրակին և վզկալի վրայով ազատ արձակած իջնում են մինչև ուսերը։ Արտավազդն ականջին կրում է օղ, վզին՝ երկու շարք մանյակ, աջ ուսի վրա հանգուցված է արքայական ծիրանին։ Թագի և նրա հետ միացված ինչպես վզկալի, այնպես էլ վերև բարձրացած ականջակալների երիզները զարդարված են մարգարտի հատիկներով։ Բարձրաքանդակ այս պատկերը վերցված է երկարավուն ուլունքներից բաղկացած շրջանակի մեջ։ Բ կողմում պատկերված է արշավող քառաձի մար-

1 Դրամագյուտին վերաբերող մանրամասնությունները տե՛ս «Երևան» թերթի 1959 թ. № 97-ում, ինչպես նաև „Коммунист" թերթի 1961 թ. № 161-ում։

2 Հայաստանի պատմության պետական թանգարան, դրամագիտության բաժին, № 17579։